

ատեննիս՝ լուռվթեամբ պիտի անցնինք նկարչութեան, արձանադործութեան և երաժշառութեան վրայէն. վասն զի երեքն ալ շատ ետ մնացած են, բայց միշտ երեքին մէջէն առաջնութիւնը նրկարչութեանն է: Բայց ամէն գիտութենէ և ամէն արհեստէ աւելի զարգացած է մեքենականութիւնը, վասն զի միայն մեքենական հանճարները քաջալերուած և խրախուսուած են ջինաց մէջ: Մեծամեծ ծանրութիւններ վերցրնելու բազմաթիւ մեքենաներ հնարած են, որոնց վրայ միայն հանճար և պարզութիւն կը տեսնուի. դարձեալ շատ գեղեցիկ գիտ է ջուրը բարձրացնելու համար հնարած ջրհաննին, որուն կարեռութիւնը երկրագործութեան մէջ աւելի կ'իմացուի. իրենց մեքենական հանճարոյն հաւաստիք են իրենց ունեցած աստեղաբաշխական և տպագրելու գործիքները, թէ և ըլլան անկատար բաններ. բայց ասոնցմէ աւելի այն մեծագործութիւնները, որոնք առանց գործեաց և մեքենայից օժանդակութեան չէին կրնար ըլլալ: Ինչպէս են մեծամեծ ուղիները, միակամար, երկաթշղթայով անդնդոց վրայէն ձգուած առկախեալ կամուրջները, բրդաձև աշտարակները, չքեղ՝ բայց միանգամայն նորաձև յաղթական կամարները՝ ի պատիւ նշանաւոր անձանց, արուետակեալ բարձրաբերձ ժայռերը, որոնք երկիւղ մը կ'ազգեն մարդուս վրայ. ընդարձակ ըները, երագընթաց հեղեղները, փրփրագէզ ջրվէմները, նշան են և անժխտելի վկաներ, թէ մեքենականութիւնը պէտք է որ ծաղկած ըլլայ մէջերնին. բայց ինչպէս մեքենականութիւնը, նոյնպէս ալ ճարտարապետութիւնը. և այս բաններէս կ'իմացուի թէ ունեցեր են գեղեցկին գաղափարը, և թէ միշտ բնութիւնը իրենց առաջնորդեր է:

Թերեւս ոմանք հմուտ կարծեն զջիները նաւարկութեան մէջ, վասն զի ամենէն առաջ իրենք անդրադարձած են մագնիսին զէպ 'ի բնեռ ձգմանը. բայց ատանկ չէ: Կողմնացուցի գործա-

ծութիւնը սովորական եղած է իրենց մէջ, որուն դինկնանչինկ կ'լսեն և ըսել է հարաւացոյց ասեղ. կողմնացուցին մէջ մագնիսին հարաւային բևեռին վրայ որոշ նշան մը գրուած է ինչպէս եւրոպական կողմնացոյցներուն հիւսիսային բևեռին վրայ: Նաւերնին կոշտ և տծե զանգուածներ են. և երկու ծայրերը կարգէ դուրս վեր բարձրացած, խարիսխնին ալ փայտէ է. չունին եւրոպացուց բարձրութիւն չափելու գործիքները, և նաւուղիներն ալ յետին նաւաստիէն աւելի հմտութիւն չունին, որոնք ձաբոն և կամ ֆիլիպպեանց կզիները կ'երթան, աստեղաց առաջնորդութը կ'երթան, ինչպէս վայրենիները. իսկ անոնք որ դէպ 'ի Պադաւիա և կամ Մալլաքքա կ'առագաստաւորեն նաւերնին, ցամաքը աչքերնէն չեն կորունցներ:

Բայց իրենց սամբաներուն չքեղութիւնը գովեստից արժանաւոր է. սամբանը նաւակի տեսակ մ'է զոր գետերուն վրայ կը գործածեն, գեղեցիկ գեղնագոյն վեւնինով մը ներկած, առագաստները փսիաթէ և գեղեցկաշէն, բայց ծանր և անթեքելի են: Մեծամեծ նաւակները քաշելու համար պամպուի կեղեկ շինուած պարաններ կը գործածեն. ոչ թէ կանեփէ և կամ կտաէ պարան չունին, այլ ամենուն մէջէն այս տեսակը աւելի յարմար գտած են:

ՄԱՆՐ ԳԻՏԵԼԻՔ

Լրագիրք բրիտանիոյ.

Մեծն բրիտանիոյ մէջ 1257 լրագիրք կը հրատարակուի, որոնց 933 յլնգիա, (226ի լոնտրա, 707 լոնտրայէն գուրս) 43 կալլէսի գաւառը. 139 Սկովտիա. 128 յիուանտա. 14 հատ ալ կը զիներուն մէջ: Այս 1257 լրագիրներէն, 53ը ամենօրեայ են յլնգիա. իսկ Սկովտիոյ և իուանտիոյ մէջ 12 հատ կայ. մէկմէկ հատ ալ կալլէս և կղզիներուն մէջ: 1865ին մեծին բրիտանիոյ մէջ միայն

734 լրագիր կար, ուրեմն ըսել է որ
աս երկու երեք տարուան մէջ 523 հատ
աւելցեր է:

Ասոնցմէ զատ 100ի չափ ուրիշ զա-
նազան օրագիրներ կան կրօնից կամ
արուեստից վրայօք:

Մատուցեալ ճով.

Յոհան Մայէն սառուցեալ և ան-
մարդաբնակ կղզին, որ 1644ին համա-
նուն հոլանտացի նաւապետի մը ա-
նուամբ կոչուեցաւ, իր ահաւոր կլիմա-
յին պատճառաւ գրեթէ ամեննեխն այ-
ցելու չունենար, մանաւանդ որ նաւար-
կութեան գծերէ ալ դուրս է: Այս կըդ-
զիս կը գտնուի կրէնլանտիոյ արևելեան
և իսլանտիոյ հիւսիսային եզերացը
մէջ, կրէնլանտիայէն 258 մղոն հեռա-
ւորութեամբ, քիչ մը աւելի հեռու է իս-
լանտայէն: Քանի մ'աստիճան հիւսի-
սային գօտիէն վեր ըլլալով, ամառն
ալ զարնուելով մրրկալից ովկիանոսի
մը ալիքներէն, այս կղզիս այն ճամբուն
վրայ կ'իյնայ, ուր հիւսիսային ծովուն
սառերը հալելով՝ իր ափանցը վրայ այն-
պիսի սառերու կտորուանք կը քշէ ուր
անկարելի է անոր մօտենալ նաև ամառ-
ատեն:

Այս կղզիս 25 քիլոմէդր երկայնու-
թիւն և 6-7 ալ լայնութիւն ունի: Բար-
ձրագոյն կէտն է Արջուց լեռ ըսուած
մշտասառոյց գագաթն 6780 անգլիա-
կան ոտք:

Այս լեռը, ինչուան հիմա ճանչցուած
հրաբուխներու մէջ ամենէն աւելի դէպ
'ի հիւսիսն է: Պարզ օդի ատեն հա-
րիւր մղոն հեռուէն կը տեսնուի, և այն
տխուր ովկիանոսին մէջ նաւարկու-
թիւն ընողներուն օգտակար նշանի մը
տեղ կը ծառայէ: բայց ափսոս որ ստէպ

այս լերան ստորոտը պատաժ է մա-
ռախլով և կատարն ալ թանձր ամպե-
րով. անոր համար ըսած է այս կղզիս
գտնող նաւապետը՝ որ աւելի դիւրին
է լսել զայն քան թէ տեսնալ: Գագա-
թէն վար կ'իջնան սրանչելի սառնա-
կոյտներ՝ ողք ինչուան ծով կը թաւա-
լին, և հեռուէն տեսնողին ձեան սաստ-
կութենէն անշարժ դարձած ահազին
սահանքներ կ'երևան:

Այս վայրենի կղզիս ձախող դէպքի
մը տեսարան եղած է: Եօթը նաւա-
տի զորոնք հոլանտացի տէրութիւնը
հոն դրկեց կղզւոյն այլ և այլ բերքերը
ժողվելու համար, և մասնաւորապէս
ձկան որսը, չկարենալով դիմանալ
խիստ կլիմային մեռան 1635ին ցրտէն.
թողով իրենցմէ ետքը եկողներուն՝ գր-
ուուածքով մը՝ իրենց նեղութեանը և
խեղճութեանց համառօտ պատմու-
թիւնը:

Կենդանի մի կայ 'ի Տիգրիս գետ՝ որ
համանուն Տիգրիս կոչի. յորժամ ձագ
կու բերէ՝ նայ կու թողու և կու ելնէ
յորս. իսկ մարդիկ վասն գեղու գան և
առնուն զձագն. եթէ գիտեն որ պիտի
գայ յետնէ՝ նայ կու վախեն թէ հա-
նի, կու բերեն երեք հայելի, և ընդդէմ
ճամպհուն կու գնեն: Յորժամ կու գայ
և զձագն չտեսնուլ՝ կու վագէ. երբ 'ի
հայելին 'ի մօտ կու գայ՝ կու հայի ու
զիւր պատկերն 'ի հայելին կու տեսնու,
կու կարծէ թէ ձագն է ու կու յեմէ. և
որսորդքն կու փախչին:

Անասուն՝ մարդս. ճագն՝ բարի գործ-
քըն. որսորդ՝ սատանայ. երեք հայելին,
մէկն՝ կին, մէկն՝ հանդերձ և կերա-
կուր. երրորդ՝ փառքն աշխարհիս:

ՈՍԿԻՓՈՐԻԿ